ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 530-21

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «17» «12» 2021թ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Արմեն Մաիլյան Արարատի» ԱՁ («Վանատուր») (այսուհետ՝ Շահառու), ի դեմս Արմեն Մաիլյանի, մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին աջակցություն տրամադրելու մասին» N 1139-Լ որոշումը և ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1320-Ն (այսուհետ՝ Որոշում) որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շահառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված 1230 «Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր» ծրագրի 12003. «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին պետական աջակցություն» միջոցառմամբ նախատեսված, Պայմանագրի 2-րդ կետով հաշվարկված աջակցությունը:

1.2. Պայմանագրով օգտագործվող հասկացությունները ունեն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1139-Լ որոշումով նախատեսված իմաստը:

2. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1 Օժանդակության ձևը՝ միանվագ աջակցություն (ֆինանսական միջոցների տրամադրում) պայմանագրի կնքման միջոցով, հետևյալ հաշվարկով՝

$$ԱՉ = ՀՔ*ՕՔ*ՄԱ*0.4–ԿՓ-Օ$$

Սույն կետի կիրառության նպատակով՝

1) ԱՉ-ն պետության կողմից տրամադրվող աջակցության չափն է, որը կազմում է 1 944 940.0 ՀՀ դրամ.

2) ՀՔ-ն շահառուի կողմից հյուրընկալված՝ Արցախի Հանրապետության քաղաքացիների թվաքանակը, որը սահմանված է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 1822-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1987-Ն որոշումների շրջանակներում օժանդակություն ստացած շահառուների ցանկերը, որը կազմում է 18 քաղաքացի.

3) ՕՔ-ն աջակցության ամսվա (2020 թվականի հոկտեմբեր) օրերի քանակն է.

4) ՄԱ-ն հոկտեմբեր ամսին շահառուների կողմից հյուրանոցային ծառայությունների մեկ օրվա միջինացված արժեքն է (10 000 ՀՀ դրամ).

5) ԿՓ-ն ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23–ի N 1822-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1987-Ն որոշումների շրջանակներում շահառուների ստացած օժանդակության չափն է, որը կազմում է 287 060.0 ՀՀ դրամ.

6) Օ-ն ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 310-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում ստացած օժանդակության չափն է, որը կազմում է 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Պայմանագրի պահանջների խախտման համար Կողմերը կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Կողմերի միջև Պայմանագրի հիման վրա ծագող այն բոլոր հարաբերությունները, որոնք կարգավորված չեն Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Պայմանագրի առնչությամբ ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Սույն Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, հայերեն լեզվով, 2 էջից, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

5.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

5.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն	**Շահառու**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Արմեն Մաիլյան Արարատի» ԱՁ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ք.Կապան, Ա. Մանուկյան 1-ին նրբ, 3/23
Կենտրոնական գանձապետական	Հ/Հ 1150018124904968
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 78658952
Հ/Հ 900011038255	
ՀՎՀՀ 02698604	
Գլխավոր քարտուղարի	
պարտականությունները	
կատարող՝	
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ	ԱՐՄԵՆ ՄԱԻԼՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.